ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/1049/02/24

20.02.2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ն. Հարությունյանս, քննության առնելով առնելով «Ծինպլյուս» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվորը 08.02.2024 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 02.02.2024 թվականին կայացված թիվ 201-Ա հրամանն անվավեր ճանաչելու: Հայցադիմումը դատավորի աշխատակազմի կողմից ստացվել է 09.02.2024թ.:

Դատարանի 13.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 14.02.2024 թվականին: Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմի կողմից ստացվել է 15.02.2024թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Շինպլյուս» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 02.02.2024 թվականին կայացված թիվ 201-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և

համարել Դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 08.02.2024թ.:

2. Քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի մարտի 25-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Նելլի Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN NELLI 5501820323 Date: 2024.02.20

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am